

թեանն ածել եւ գումարել՝ ըստ արժանաւոր եւ պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց, եւ ռոճիկս կարգել ի դարմանս:

5 Իսկ իբրեւ հրամանն այն արդեամբք եւ գործովք յանկ ելաներ, ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկաներ, որով անդէն յական թաւթափել վայրենամիտ¹ եւ դատարկասուն² եւ անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարգարեագետք եւ առաքելածանաւթք եւ աւետարանածառանգք լինէին, եւ ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւրք անտեղեակք: 6 Դարձեալ առաւել եւս երկիւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր սատանայակիր³ եւ դիւամոլ ազգին սաստիւ՝ թափել զերծանել յունայնավար հնացելոցն⁴ եւ հնազանդ լինել ամենաիտեշտ լծոյն Զրիստոսի:

7 Եւ յորժամ զայն արարեալ⁵ հաւասարութեամբ եւ լցեալ զպիտոյն իւրեանց եւ զկամացն յաւժարութիւն⁶, ձեռնատու⁷ եւս եղեալ նմա սրբամատոյց⁸ վարդապետութեանն⁹ ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին, որում անուն¹⁰ Մուշեղ կոչէին, հրաժարեր ապա եւ ի թագաւորէն եւ յեպիսկոպոսացն եւ յամենայն եկեղեցւոյն Աղուանից: 8 Եւ զմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցաներ, հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն, որում անունն Յովնաթան կոչէին, որոյ բազում յաւժարութիւն ի վարդապետութենէն եր գտեալ:

9 Եւ յանձն առնելով զնոսա եւ զանձն՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ, խաղացեալ զայր ի կողմանցն Աղուանից, անցանել յաշխարհն Վրաց:

[ԺԹ]

7 Եւ հանդէպ հասեալ զայր Գարդմանական ձորոյն: 2 Ընդ առաջ լիներ նմա իշխանն Գարդմանից, որում [անուն] Խուրս¹¹ կոչէին, եւ ասպնջական եղեալ նմա աստուածասեր երկիւղածութեամբ, առաջի դներ զանձն վարդապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով: 3 Առաւելագոյն իսկ վայելեալ ի

1 *bc* վայրենամարտք

2 *bc* դատարկասունք

3 *b* սատանակիր

4 *bc* յունայնավայր հնացելոյն

5 *b* արեալ

6 *b* գլոխարութիւնն / *c* յոժարութիւնն

7 *v* ձեռնտու

8 *bc* ստամատոյց

9 *bc* վարդապետութեամբն

10 *բոլորը՝ չիք* անուն

11 *bc* Խուրսն